№ 36 ՄԱՅԻՍԻ 23 (ՅՈՒՆԻՍԻ 4) 1877 ՄԱՅԻՍԻ 23 (ՅՈՒՆԻՍԻ 4) № 36

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 7 ռուբլ, կէս տարվանը 4 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Գատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“ լրագրի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ խնդրում է այն բաժանորդներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ կէս տարվայ բաժանորդական գինը լիովին չեն տուել խմբագրութեանը, շտապել լրացնել իրանց բաժանորդագինը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական նուէրները։—Ներքին տեսութիւն։ Պատերազմական բեմից։ Հողի պատմական նշանակութիւնը։ Նամակ Գօրուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Ֆրանսիա։ Գերմանիա։ Յունաստան։ Աւստրօ-Ունգարիա։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐԸ

—

Շատ ժամանակ է սրանից առաջ տեղական ռուս «Кавказъ» լրագիրը մեղադրում էր Թիֆլիս քաղաքը և նրա բնակիչներին, մանաւանդ հայ հարուստներին, որ նոքա քիչ են նուիրում յօգուտ պատերազմի։

Եթէ հաշուենք մի առ մի այն նուէրները, որ արած են թէ քաղաքը, թէ քաղաքացիները, թէ քաղաքիս այլ և այլ հիմնարկութիւնները,—կը տեսնենք, որ այնքան առիթ չը կայ մեղադրելու, որքան մեղադրում է մեզ ռուսաց լրագիրը։

Հաշուենք այն նուէրները, որոնց կարողացանք ինքներս յիշել և որոնց մասամբ յիշատակում է ինքն «Кавказъ» լրագիրը իր այն յօդուածից յետոյ հրատարակված հետևեալ համարներից մինում։ Յիշենք և շատերի անձնական ծառայութիւնները և արած զոհաբերութիւնները։

Պաշտօնական գրեթէ բոլոր տեղերի ծառայողները նուիրում են իրանց ամսական ռոճիկից պատերազմի ամբողջ տևողութեան ժամանակ 1 կամ 2 պրօցէնտ, ուրիշները նշանաւոր գումարներ են հաւաքում ստորագրութեամբ։ Կըրուժօկը տուել է 1000 ռուբլ յօգուտ «Կարմիր Խաչի» ընկերութեան, Հայոց կլուբը նոյնպէս 1000 ր., Առևտրական բանկ 1000 ր., Փիտոեվ եղբայրները տուեցին 2000 ռուբլ, քահանայ Բուլգարեվիչ 1000 ռուբլ, պ. Տէր-Յովհաննէսեանց 1000 ռուբլ, պ. Թօտինեանց 500 ռուբլ, Քաղաքային վարչութիւնը, մօտ 9000 ր., հաշուելով այն գումարները, որոնց նա տուած է թէ զինուորականների կանանց և ընտանիքներին օգնելու, թէ յօգուտ «Կարմիր Խաչի» ընկերութեան տուած գումարը։ Թիֆլիսի Գերմանական կլուբը սիրողների ներկայացումն տուեց յօգուտ հիւանդ և վիրաւորված զինուորների, քաղաքիս մէջ կազմվեցաւ մի առանձին մասնաժողով, որ իրագործելու է Ալէքսանդրեան այգիում ժողովրդական տօներ նոյն նպատակով։ Ռուս դերասանները տուեցին մի ներկայացումն և դիտաւորութիւն ունեն շարունակ ներկայացումներ տալ դարձեալ նոյն նպատակով։ Ալէքսանդրեան այգիում կառուցած կարուսէլի տերը, պ. Ռամազեանց դիտաւորութիւն ունի նուիրել «Կարմիր Խաչի» ընկերութեանը եօթ օրվայ ստացած արդիւնքը։ Վրաց ազնուականութիւնը իր ծախսով կազմակերպեց երկու հարիւր մարդից բաղկացած միլիցիա։ Ընդունվեցան նուիրատուութիւններ պատերազմի պէտքերի համար Թիֆլիսի մէջ բնակվող հրէաներից, մալականներից, շվէյցարացիներից, բապտիստներից, աւետարանական համայնքից և ֆրանսիացիներից։ Նոյն համայնքներից շատերը, թէ մարդիկ և թէ կանայք, գնացին որպէս կամաւորներ առողջական խմբերի մէջ։ Հրէաները դիտաւորութիւն ունեն տալ մի պարահանդէս յօգուտ «Կարմիր Խաչի» ընկերութեան.... և այլն։

«Кавказъ» լրագիրը յարձակվում է հայ հարուստների վրա, բայց միթէ նա չէ իմանում որ հայերի անունը առանձնապէս շատ քիչ կարող է պատահել այն պատճառով որ այդ նուիրատուութիւնների մէջ հայերը ամենից շատ մասն ունեն, որովհետև Թիֆլիսում ամենից շատ թուով են և նրանք ամեն տեղ կան՝ թէ կլուբներում, թէ բանկերում, թէ պաշտօնական տեղերում, թէ քաղաքային վարչութեան մէջ, թէ վրաց ազնուականութեան մէջ, թէ պարահանդէսներում, թատրոններում ժողովրդական զբօսանքներում, կօնցերտներում, ստորագրութիւնների մէջ և այլն,—նրանք են կազմում բազմութիւնը։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

—

Բայազէտից պաշտօնապէս հաղորդում են հեռագրով մայիսի 15-ից որ գէներալ Տէր-Ղուկասով մայիսի 14-ին հետախուզութիւններ արաւ Սուրբ-Յովհաննէսից Եփրատի ձախ ափերի ուղղութեամբ մինչև Ղաղարի սարերը և նկատեց թիւրքերի ամրացած բանակը Ղարաքլիսի, Աղ-Խանայի և Ալաշկերտի մօտ։ Անյետեղ երևեցան քուրդերի խմբերը, որոնք մեր զօրքերից յետ մղվեցան։ Քուրդերից մի քանիներ սպանվեցան։—Օղուրգեսից մայիսի 16-ին հաղորդում են որ Կօբուլէթի առաջաւոր զօրքը, գնդապետ Գուրիչի առաջնորդութեամբ անցաւ Կինարիշի գետը և առաւ Սամէբայի բարձրութիւնները, կարելով Կօբուլէթի և Ցիխիս-Ձիրիի յարաբերութիւնները։ Թշնամին յետ է քաշվում Ցիխիս-Ձիրի։ Գուրիչի զօրքի մէջ երեք զինուոր վիրաւորվեցան։ Խուցա-Ուբանիին 6 վերստ չը հասած Զէնիտի գիւղը մեր զօրքից վեր առած է. այդ կուի մէջ մեր կողմից 4 մարդ սպանված են և 26 վիրաւորված են։ Կինարիշի գետի վրա ռուսները կամուրջ են շինում։—Կիւրուկ-Դարայից հեռագրում են մայիսի 17-ից որ մայիսի 13-ին գէներալ մայոր Լօռիս-Մէլիքովը իր հեծելազօրքով նշանաւոր կռիւ է ունեցել Ղարսից դուրս եկած թիւրքաց զօրքի դէմ։ Մանաւանդ շատ լաւ էին հրացան արձակում հեծեակ կազակները։ Մեր կողմից սպանված է 1 մարդ և վիրաւորված են 6 մարդ։ Թշնամին կորցրեց 40 մարդ։

### ՀՈՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—

Մի ազգութիւն, որ պարապում է երկրագործութեամբ, չէ վարում ասատանդական կեանքը, այլ կապված է հողի հետ։—Այն ազգը անկասկած երկարատև գոյութեանը կարող է ունենալ։ Մեր ազգի առաջ պատմութիւնը շատ ազգեր է գնում, որոնք կապված չը լինելով երկրագործութեան միջոցով հողի հետ—աւելի լաւ է ասել չը պարպելով երկրագործութեամբ, անյայտացել են երկրագնտի բեմից։ Աւելորդ չէր լինի կամ մեզ աւելի լաւ կը համոզէր, եթէ պատմական շրջանից վերցնէինք մի ազգ՝ որ ենթարկվեր այն տեսակ ճակատագրին։

Ամեն անձն որ ուսում է առել մի որ և իցէ ուսումնարանի մէջ, կը յիշէ պատմութենից փիւնիկեցիների ազգը,—թէ այն ազգը որտեղ էր ապրում. առաջ այդ ազգը ինչպէս պարապում էր ծովային աւազակութեամբ, յետոյ ինչպէս ծաղկեց նորա մէջ արհեստը և վաճառականութիւնը, ինչպէս փիւնիկեցիները շրջում էին ամբողջ Միջերկրական ծովի վերայ քաղաքները և առևտուր ունէին նոցա հետ, հասնում էին մինչև անգամ Անգլիա և Գերմանիայի հիւսիսային երկիրները, իսկ միջին դարի սկզբներին, այդ տեսակ վաճառաշահ և արհեստաւոր ազգը, ինչպէս ենթարկվեցաւ կորստեան ճակատագրին՝ առանց որ և իցէ հետքը թողնելու։

Ուրեմն ի՞նչ էր պատճառ այն տեսակ վաճառաշահ և արհեստաւոր ազգի կորստեան։ Պատճառ շատ պարզ է.—ասատանդական կեանքը, հողի հետ կապված չը լինելը, երկրագործութեամբ չը պարապելը, վերջապէս չը պահպանելը իր ընտանեկան յարաբերութիւնները և ազգի բուն սովորութիւնները։

Շատերը կասեն թէ մի ազգութեան մէջ, եթէ փոքր ի շատէ ծաղկել է գրականութիւնը, այն ազգը չէ կարող կորչել։ Արդարև ճշմարիտ է, երբ մի ազգ պարապում է ընթերցանութեամբ, հետաքրքրվում է իւր գրականութեամբ, հեշտ չէ կարող կորչել բայց և չէն կարող հաւատի լինել, որ գոյութիւն կունենայ. քանի որ մի ազգութիւն պարապում է միմիայն վաճառականութեամբ, չունի ինքնուրոյն կեանք, քանի որ նա հալածանքների և հարստահարութեան է ենթարկվում, և պատահմունքներից ստիպուած նորա անդամները յաճախ անջատվում են իրանց ազգից, ընտանիքից և սկսում են ապրել ուրիշի կեանքով, մոռանում են ազգի պահպանող բոլոր յատկութիւնները և սովորութիւնները,—այն ժամանակ այն ազգութիւնը դարձեալ կենթարկվի կորստեան ճակատագրին։

Բաւական է ինձ խօսել ընդհանուրի վերա, քանի ունենք մեր ցաւերը բուժելու։ Մենք յիշենք մեր ազգի բոլոր թշուառութիւնները՝ հալածանքները, մեր ընտանիքի և կոյսերի անպատուութիւնները թուրք մոլեռանդ ցեղերից, որ մինչև այսօրս էլ անհանգիստ են անում մեզ, թունաւորում են, խայթում են, վրդովում են մեր ընտանեաց անդորրութիւնը և կամենում են արմատախիլ անել հայ ազգը։ Ո՞ւր են Հայաստանի այն բազմաթիւ երկրագործները.... Այո՛, թուրք մոլեռանդութիւնն է, որ սրաճառակ է առել, իսկ մնացածներին բաժանել է իրանց մայր երկրից, հայրենիքից և ցրուել է երկրագնտի զանազան ծայրերը և նոքա ենթարկվելով իրանցից բազմաթիւ ազգերի ազդեցութեանը՝ ընդունել են նոցա ապրուստի եղանակը և սովորութիւնները, մոռացել են մայրենի լեզուն և ազգութեան բոլոր յատկութիւնները։

Եթէ մենք հետաքրքրվէինք և հետազօտէինք մեր ազգի անցեալ վիճակը, մեր պատմութիւնը՝ կը նկատէինք, բացի այն հալածանքները, որ կրել են թուրք ցեղերից և ցրուել են զանազան կողմեր, որ հայերի թշուառութեան գլխաւոր պատճառներից մինը եղել է նաև ստրկական ոգի։ Հայը արծաթի համար միշտ ընկճուել է ամեն ազգի առաջ և թափառելով աշխարհիս ամեն կողմերը, պարապել է և պարապում է ներկայումս վաճառականութեամբ, իսկ պարապելով վաճառականութեամբ՝ ստիպված է եղել գաղթել օտարութեան մէջ։

Եւ այդ օտարութիւնը այն օտարութիւնը չէ ինչպէս եւրօպական ազգեր գաղթում են մի քանի տարիներով, որտեղից իրանց վիճակը լաւացնելուց, իրանց նիւթական դրութիւնը ապահովելուց յետոյ դառնում են դէպի իւրեանց հայրենիքը։—Հայը հեռացաւ իր հայրենիքից, այնուհետև նորա համար ոչ

հայրենիք կայ, և ոչ էլ մայրենի լեզու։

Հայրենիքը նորա համար այն երկիրն է որտեղ դիզում է փողերը և նորա գերեզմանը փորվում է այն երկրի վերա որտեղ նա փողեր է հաւաքել։ Ահա այս է հայութեան ճակատագիրը։

Քրիստոնեայ ազգերից մի ազգը այնպէս ցրուած է աշխարհիս ամեն ծայրերը,—ինչպէս հայերը։ Ուր գնաս, թէ Եւրոպայի և թէ Ասիայի խորքերը՝ կը գտնես հային։ Միթէ աղքատութենից է վիճակվում հայերին հեռանալ մայր երկրից, ընտանիքից։ Ոչ.—իր առևտրական դրութիւնն է հեռացնում հային։ Եթէ երկրագործութեամբ պարապէին, հետաքրքրէին հողով, հետաքրքրէին նորա դամարները, կապված լինէին հողի հետ,—նոքա աղքատ չէին լինի.... Երկիրն է գանձարանը ամեն տեսակ հարստութեան, վարձատրում է աշխատողին, բարձրացնում է ժողովուրդը՝ բարոյապէս, մտաւորապէս և նիւթապէս։

Այսպէս ազգերը, որոնք չունեն ինքնավարութիւն, ինքնուրոյն կեանք,—կարող են գոյութիւն ունենալ այն ժամանակ, երբ գընվեն բարեկարգեալ տէրութեան հովանաւորութեան ներքոյ,—ինչպէս մենք Ռուսաստանի մէջ, վայելելով մարդկութեան աղատ իրաւունքները։ Բայց այնու ամենայնիւ և այս աջող հանգամանքների մէջ գտնվելով, կարելի է անհետանալ, իր ազգային անհատութիւնը կորցնել, եթէ չը պարապենք երկրագործութեամբ, կապված չը լինենք հողի հետ և մեր գլխաւոր ուշադրութիւնը, մեր ամբողջ ոյժերը և ջանքերը չը դարձնենք հողի մշակութեան վրա։

Բ. Տէր-Աբրահամեան

## ՆԱՄԱԿ ԳՕՐՈՒՑ

Մայիսի 3-ին

Գօրու դիրքը բաւական գեղեցիկ է և ունի 1160 տուն բնակիչ, բաղկացած հայերից, վրացիներից և միւս շատ աննշան թուով ազգութիւններից։ Գօրու մէջ տեղը բարձրանում է մի քանդուած բերդ, որը կարծես լաց է լինում իւր ստորոտում կառուցած տների ու բնակեցրած ժողովրդի վրա։ Առաջին անգամ որ կը մտնէք Գօրի, դուք կը տեսնէք այստեղի ծուռ ու մուռ փողոցները, որոնք անձրևի ժամանակ, մանաւանդ ձմեռը լքցվում են անանցանելի ցեխով, և սրա վրա մտածող չը կայ։ Արևը մայր է մտնում թէ չէ, բնակիչները ստիպուած են տներում փակուել և այլ կերպ անկարելի է, որովհետև ամբողջ Գօրիում մի լապտեր չես գտնի։ Ահա այս է պատճառը որ գիշերները հարուստ մարդիկ մի մի ֆանար վերցրած մեզ են գալիս շատ զգուշութեամբ, այնպէս որ հեռուից նայողը կը կարծէ թէ գնացողը մի բան է կորցրել ու որոնում է, իսկ չքաւորները, որոնք ֆանար չունեն կարծես գիշերով աչքակապուկ են խաղում, որովհետև իրանք էլ չը գիտեն թէ ուր են գնում։ Բայց ցաւն այն է որ այս ողորմելիները երբեմն այնպէս են դիպչում միմեանց, որ մէկի քնթից արիւն է վազում ու միւսի ատամները ջարդվում։

Քաղաքացիներ շատ լաւ կանէին որ մանդալիս մի մի դուդուկ բռնէին ու ածէին, ապա թէ ոչ այդպիսի փորձանքներից չեն ազատուի... Գնանք մտնենք քաղաքային Դումա, տեսնենք ինչ են անում։ Ձայնաւորները անչարժ նստած իւրեանց տեղերում նայում են քաղաքագլխին։ Քաղաքագլուխը խօսում է ռուսերէն, իսկ ձայնաւորները դարձեալ նստած նայում են. քաղաքագլուխը հարց է առաջարկում. ձայնաւորները չեն պատասխանում։ Գիտեմ կասէք զարմանալի ձայնաւորներ են եղել։ Ես էլ ձեզ պէս առաջին անգամ շատ զարմացայ, բայց վերջը իմանալով, որ ողորմելի ձայնաւորները ռուսերէն չեն իմանում, եկայ այն եզրակացութեանը որ մեր գօրեցիք սոցա ընտրել են միայն ձեի համար։

Այս էլ ձեզ Դումա իր ընդարձակ նշանակութեամբ... Այժմ գնանք արհեստաւորի մօտ ու մի չոր կարել տանք։ Բայց գիտէք թէ այս օրուայ տուածը երբ կը պատրաստի։ «Վաղը արի, վաղը արի» ասելով երկու ամիս կը չարչարէ և երանի թէ կարածն էլ մի բանի նման լինի։ Փորձեցէք նորան ասել թէ՝ պարոն, ձեր կարածը վատ է և նա իսկոյն կը պատասխանէ՝ «գնա որտեղ ուզում ես գանգատ արա»։ Մեր արհեստաւորները այսպիսի վարմունքից յետոյ իրաւունք ունեն գանգատվելու թէ՝ մեր վիճակը վատ է ու մենք թշուառ ենք ապրում և այլն։ Գալով մեր վաճառականներին, կասեմ որ եթէ մէկը ուզենայ սոցա հետ առուտուր անել, նախապէս պէտք է ծանօթ լինի այստեղի վաճառականների բնաւորութեան հետ, ապա թէ ոչ անպատճառ մենամարտ կը բացանէ, որովհետև այստեղի վաճառականը եթէ չը կարողացաւ իր ապրանքը քեզ վրա սաղացնել, հազար ու մէկ բարբարոս ու կծու խօսքերը կը թափէ գլխիդ, իսկ եթէ քեզ զսպեցիր կամ հաւատացիր նրա ճարպիկ խօսակցութեանը, քո առած ապրանքը կամ պէտք է լինի փտած, կամ հոտած և կամ վերջապէս մի ֆունտից 16 մսխալ պակաս։ Ինչպէս միւս քաղաքներում այստեղ էլ կան կինտոներ, որոնք ամբողջ չաբաթներով շրջելուց յետոյ կիւրակէ օրերը հաւաքվում են և երկու խմբի բաժանուելով (վերին և ներքին թաղ), կռւում են միմեանց հետ, ջարդում են մէկ մէկու քիթն ու պռունգը, պատռտում են շորերը և այլն... Անկարելի է չը ծիծաղել, երբ սոցա թուում խառնվում են Գօրու լուսաւորեալ (?) երիտասարդները ու կռւողներին քաջալերում և երբեմն էլ նախանձելով նոցա վրա իրանք էլ են մտնում կռւի մէջ։

Մի քանի տարի սորանից առաջ քաղաքը ծախեց ժողովրդի վրա մի դաշտավայր տեղ Գօրուց դէպի արևմուտք, ուր երբեմն անց էր կենում Լիախվայ գետը։ Ժողովուրդը տեսնելով տեղի արժանութիւն, չատպեց առնել և չինութիւններ գցել. յիրաւի փոքր ժամանակում բաւական տներ չինուեցան։ Բայց Լիախվա գետը յանկարծ կատաղեց և յիշելով իր հին ժառանգութիւնը, արձակ համարձակ քաշեց և առ ժամանակ բաւականացաւ քանդել մի քանի տուն և մնացած տներին էլ բարի լոյս ասելով, անցաւ նոցա դռների ու պատուհանների միջից։

Փորձեցէք հագնել հասարակ շորեր,—և դուք կը դառնաք ամբողջ ժողովրդի խօսելու առարկայ. ձեզ կմատնացնեն, կը ծիծաղեն ձեզ վրա... հետևեցէք նոցա, հագէք թանդագին շորեր,—և այն ժամանակ աւելի կը խօսեն, կասեն «որտեղից է հագնում այս տեսակ շորեր, ով է սորան այսքան փող տուել...»

Դեռ Գօրումն եմ։ Ցանկարծ վախճանվում է Թաթոսը. ննջեցեալի չորս կողմը շարվում են մարդիկ, կանայք, կազմվում է ցուցակ բարեկամներին հրաւիրելու, հաւաքվում են մօտ 80 հոգի. բարձրացնում են աղաղակ, լաց, կոծ. մէկը պարտաւորեցնում է իր առաջև դրած գիակին էն աշխարհում բարեւել իր եղբօրը, մօրը, հօրը, իսկ միւսը սոխ է քսում աչքերին, որ շատ արտասուք թափէ...

Ննջեցեալին տանում են եկեղեցի. քահանան կանգնում, քարոզ է ասում, բայց վայ այն քահանային ով որ քարոզ չի ասի. միով բանով քահանան պարտական է քարոզել և գովել ննջեցեալի անցած գործերը, բարձրացնել հանգուցեալին մինչև երկինք, ապա թէ ոչ մի մանեթի տեղ տասը չայ կը ստանայ։ Հիմա եթէ քահանան իր քարոզը ստութեամբ ու կեղծաւորութեամբ լքցնէ՝ կարելի է մեղադրել... Պարզ բան է այսպիսի քաղաքում երկար մնալով մարդս կը տիրի։ Ես էլ տխուր գնում եմ այստեղի հասարակական այգի։ Ինչ անես, ուրիշ տեղ չը կայ։ Դեռ այդի չը մտած հեռուից լսում եմ ձայներ... մօտենում եմ և ինչ եմ տեսնում՝ մուղիկա... Զարմանալի բան. ով է սոցա վրա ողորմած աչքով նայել. հա, ժամանակով եկած զօրքի խումբն է ածում... Երանի թէ նայէիք այս բացօդեայ թատրոնի վրա և կը տեսնէիք թէ ինչպէս մէկը ուրախութիւնից թռչկոտում էր, միւսը պար գալիս համաձայն մուղիկայի ածած եղանակին, երրորդը ձիով ներս մտնում...

Գիտեմ շատերը կը ծիծաղեն սոցա այսպիսի կապկութեան վրա, բայց եթէ մի քիչ խղճմտանքով դատենք, սոցա վարմունքը բոլորովին իրաւացի է, որովհետև տարիների ընթացքում բացի գորդերի, փողոցի օրգանի ու զուռնի ձայնից ոչինչ չեն լսել։ Վերոյիշեալ հասարակական այգի ասելով գուցէ կարծէք թէ սա լինի այնպիսի այգի, ուր գտնվում են ծառեր, որոց ստուերում կարելի լինէր զովանալ, նստարաններ որոց վրա հնարք լինէր հանգստանալ։

Ո՛չ. այս այդին իր մեծութեամբ հաղիւ երկու կալին հաւասար լինի, միջի եղած ծառերն էլ այնքան փոքրեր են ու ցանցար, որ հաղիւ թէ մի անասուն կարողանայ իր գլուխը պաշտպանել արևի ճառագայթներից, իսկ նստարանների թիւը հաղիւ թէ հասնի չորսի։ Ուրեմն այնտեղ մարդ եկողը եթէ քաղաքավարութեամբ վարուեց չը կարծեմ թէ նստելու տեղ գտնի։ Նայելով քաղաքիս տների վրա կարելի է ասել, որ բնակիչների մէջ գտնվում են թէ հարուստ և թէ աղքատ դերդաստաններ, բայց նայելով նոցա շորերի վրա անկարելի է լինում սոցա հասարակական դասակարգերը որոշել, որովհետև ամենքը միակերպ շռայլ կերպով են հագնվում ու միակերպ առաջ գնում։ Հարուստը ասում է. «ես ստեղծուել եմ նորա համար որ զուարճանամ, ուրախանամ» իսկ աղքատը իրան արդարացնելու համար ասում է. «բաւական չէ որ ես աղքատ եմ. ինչու յետ մնամ հարուստից. նա ինչով է ինձանից լաւ. ես ցամաք հաց կուտեմ ու լաւ շոր կը հագնեմ»։

Այս տաի մեծ պասին Տէր-Ստեփաննոս քահանայ Տէր-Ստեփաննոսեանը իր քարոզի մէջ ցոյց տուեց հարուստ կանանց այն սխալ համոզմունքը թէ շորերով միայն պէտք է հետևել եւրոպացիներին։ Նա շատ հասկանալի կերպով բացատրեց այն ճշմարտութիւնը որ եթէ մենք կամենում ենք հետևել Եւրոպային, նախապէս մեզ հարկաւոր է ուսում, գիտութիւն, որդւոց դաստիարակութիւն և ոչ թէ շորեր։ Ցոյց տուեց նոյնպէս և այն թէ ինչպէս հարուստ դասի կանայքը պատճառ են դառնում չքաւորների գայթակղութեան և թէ ինչպէս նոքա, այսինքն չքաւորները օրինակ վերցնելով հարուստներից, ստիպում են այր մարդկերանց ընկնել պարտքերի մէջ։ Բայց ափսոս որ ժողովուրդը փոխանակ չնորհակալ լինելու նորանից սկսեց զանազան անտեղի խօսքեր արտասանել նրա վրա։ Այսպէս ուրեմն մեր թէ հարուստ և թէ չքաւոր դասի կանայքը յետ չեն մնում արտաքին լուսաւորութիւնից, բայց ներքին լուսաւորութիւնը, խելքը, բարոյականութիւնը... էհ ով է նոցա գլուխը մտնում, ով է հարցնում նոցա հասկացողութեան չափը։ Եւ ինչ կարօտութիւն կայ մի բան սովորելու մինչդեռ մայրերը գոհ են իւրեանց վիճակից, իսկ աղջիկներն էլ լաւ գիտեն որ մեր այժմեան երիտասարդները եթէ կին են ուզում, ուզում են միայն փողի համար։ Այդպէս էլ լինում է հարուստները հանում են իւրեանց նպատակին, պսակվում են իրանց պէս ունեորների հետ, իսկ չքաւոր օրիորդները եթէ կարողանում են մի կերպ խաբել ունեորներին խօ շատ լաւ, իսկ եթէ ոչ՝ մնում են տանը մինչև մահը և կամ շատ մտածելուց մաշվում, մեռնում են բարակացաւով։ Ինչ և իցէ մեծ մասամբ երկու դասակարգի աղջիկները մի կերպ պսակվում են և որդիներով շրջապատվում։ Այժմ տեսնենք մեր ծնողների խնամքն ու հոգսը գէպի իւրեանց զաւակները։ Հարուստ կանայքը, եթէ կարելի է այսպէս ասել, այնքան են մտածում իւրեանց զաւակների կրթութեան վրա, որքան մի գիւղացի իւր կովի վրա։

Սկզբից նա իւր զաւակին յանձնում է մի ծծմօրը, իսկ ինքը զուարճութեանց ետևից ընկնում... և ինչ յանցանք կայ այստեղ։

Իր խելքով ինքն էլ պէտք է կաթը տայ ու ծծմայրն էլ։ Երբ որդին մեծանում է ծնողը տալիս է նորան ուսումնարան և այն էլ ոչ թէ բան սովորացնելու, այլ էնպէս, ձեի համար և կամ երեխայից ազատվելու համար։ Գալով չքաւոր ծնողների վրա, պէտք է ասել որ նոքա աւելի լաւ հնարք են գտել ազատ լինելու իւրեանց մանուկներից։ Ծնուելու օրից սկսած նորան ամեն օր տալիս են թիախփարուխ կամ խաչխաչ (թմբեցուցիչ ուտելիք) և այնպէս քնացնում, իսկ մեծացաւ թէ չէ, դարձնում են նորան մի դուքնի աշակերտ կամ 6—7 տարով տալիս մի արհեստաւորին։ Բայց թէ նա ինչ պէտք է սովորէ այստեղի վաճառականներից ու արհեստաւորներից,—թողնում եմ ընթերցողների դատողութեանը։

Ա.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում որ այս օրերս հասաւ Թիֆլիս ռուս թատրոնական հեղինակ Ն. Ա. Պոտէխին, որ գիտաւորութիւն ունի ներկայացնել տալ Թիֆլիսում իր մի նոր դեռ չը խաղացած «Богатыри Вѣка» պիէսա, յօգուտ «Կարմիր Խաչի» ընկերութեան։

—

Ս. Պետերբուրգից մեզ գրում են մայիսի 10-ից որ ռուսաց մայրաքաղաքում մի քանի օր է անընդհատ անձրևներ էին գալիս իսկ այժմ եղանակը շատ պարզ է, թէպէտ և բաւական ցուրտ։ Մայրաքաղաքի թատրոնները, բացի «Ալէքսանդրեան» թատրոնից, արդէն փակվեցան։ Բացվում են քաղաքից դուրս ամարանոցներում եղողները։ Բայց ցրտի պատճառով դեռ ես երկիւղալի է ամարանոց տեղափոխվել։

—

Ս. Պետերբուրգից գրում են մեզ որ մայիսի 1-ից Մայրաքաղաքի մէջ պէտք է հրատարակվել սկսի «Сѣверный Вѣстникъ» օրագիրը, որի խմբագիրն է Վ. Բիչկով, իսկ հրատարակիչը Ե. Կօրշ։

—

ՍԻՄՖԷՐՕՊՕԼԻՑ ստացած նամակից տեղեկանում ենք, որ քաղաքի բնակիչների թիւը կրկնապատկվում է մօտակայ տեղերից այնտեղ բնակութիւն որոնողների պատճառով։ Ուստի կենսական պիտոյքների գները բարձրանում են։ Տեղ տեղ յայտնվեցան զանազան հիւանդութիւնների նշաններ։

—

ՍՈՒԲԱՄԻՑ մեզ գրում են՝ «Այստեղի փոքրիկ հայոց հասարակութիւնն էլ անտարբեր չէ մնում ընդհանուր աստուածահաճոյ բարեգործութեան զգացմունքին։ Մայիսի 10-ին տեղիս հայ հասարակութիւնը «մատաղ» ունէր։ Այդ մատաղը ի զուր չանցաւ. մեր աւագ քահանայ տէր Յովսէփ Առիւծեանցը ճաշի ժամանակ ասաց մի քանի խօսքեր, որոնց գլխաւոր միտքը այն էր, որ օգնենք այն վիրաւորված և հիւանդ զինուորներին, որոնք մեզ համար արիւն են թափում։ Ժողովուրդը սիրով ընդունեց տէր հօր խօսքերը և իսկոյն ստորագրութիւն բացվեցաւ, որից գոյացաւ հարիւր քարասուն ռուբլ (140 ր.)։ Ստորագրութիւնը դեռ չարունակվում է, որի համար ընտրվեցան մի քանի անձինք, որոնք այդ մասին պէտք է հոգան։ Այստեղի մի քանի հայ պարոններ գիտաւորութիւն ունեն ստորագրութիւն բանալ և հրդեհից վնասված վանեցիների համար։»

—

ՍՈՒԲԱՄԻՑ մեզ գրում են և այն որ այս տարի այն կողմերում անձրևները առատ են և յոյս կայ լաւ հունձի։ Արտերը այնքան բարձրացել են, որ վաղուց է այսպիսի արտեր սուրամցիները չեն յիշում։ Պատերազմի պատճառով ուտելիքները թանդացան։ Հացը որ 60 կոպէկով էր ծախվում, այժմ արժէ 1 ր. 30 կոպ., սիմինդրը 25 կոպէկից բարձրացաւ մինչև 70 կոպէկ։ Գարին 1 ր. 10 կոպէկով էր ծախվում, քանի որ արտիլէրիայի զօրքը այստեղ էր կանգնած։ Խոտը արժ էր 1 ր. 20 կ., միսը արժէ 10 կոպէկ ֆունտը, պանիրը 15 կոպ., հինգ հատ ձու 5 կոպ., թխած հացը չը նայելով որ տակաւորով պէտք է 3 կոպէկով ծախվի, ծախվում է 4, շատ անգամ 5 կոպէկով։

—

Մեզ հաղորդում են ՍՈՒԲԱՄԻՑ, որ այս տարի Թիֆլիսի հարուստներից դեռ ոչ ոք չէ եկել Սուրամում ամառը անցնելու, ինչպէս որ այդ միշտ լինում է մայիս ամսին։ «Երևի, աւելացնում է մեր թղթակիցը, դեռ շքերը չեն նեղացնում ձեր քաղաքի քնքոյշներին...»

—

Նորերումս «Кавказъ» լրագրում կար մի յօդուած «Замѣтка Тифлисца» վերնագրով, որի մէջ հեղինակը յարձակվելով հայ հարուստների վրա, մեղադրում է նրանց որ նոքա քիչ են նուիրում յօգուտ պատերազմի։ Կարելի է միայն զարմանալ թէ «Кавказъ» լրագրի խմբագիր, պ. Վ. Օրոնով թոյլ է տուել այդ տեսակ անտակտութիւն տպել իր լրագրում։ Այդ անզգոյշ յօդուածը, յայտնի չէ ինչ պատճառով, շատերը սկսեցին վերաբերել պ. Վ. Ժէլիխովսկուն։ Այժմ պ. Ժէլիխովսկի նամակով յայտնում է «Тифл. Вѣстн.» լրագրում, որ չէ գրել այն յօդուածը և երբէք չէր թոյլ տայ իրան այդ տեսակ բան գրելու։

—

ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութիւնը յայտնում է ընդհանուր գիտութեան՝ 1. որ Ուպրավայ յանձնել է իր կատարող պաշտօնեաներին պահանջել զանազան անձինքներից Ուպրավայի կասսայի մէջ ապառիկ մնացած փողերի մնացնելը և 2. որ կատարող պաշտօնեաները իրաւունք չունեն իրանք ստանալ ապառիկ մնացած փողերը, այլ պէտք է պահանջեն միայն պարտապաններից Քաղաքային վարչութեան կողմից տուած ստացականներ, որպէս ապացոյց

թէ նոքա մոցրել են փողերը Ուպրավայի կասա։ Այդ պատճառով սկսած ներկայ թուի մայիսի 20-ից բոլոր սատցականները, որոնք տուած կը լինեն կատարող պաշտօնեաների կողմից ընդունած փողի փոխարէն, անվաւեր կը համարվեն։

—

ՄՕՍԿՎԱՅԻ գործակատարների օգնական ընկերութիւնը նուիրել է նորերումս յօգուտ «Կարմիր Խաչի» ընկերութեան 5000 ռուբլի։

—

ՕԴԷՍՍԱՅԻ բանկիր բարօն Էրնէստ Մասս նուիրեց 10,000 ռուբլ յօգուտ պատերազմական պէտքերի։

—

Տեղական ռուս լրագիրները սատցած են հետեւեալ հեռագիրը Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ բորսայի կուրսերի վրա։ Ռուսաց բուբլու փոխանակութիւնը Լօնդօնի վրա արժէ 25⁵⁸ պէնս, Փարիզի վրա 267 սանտիմ, առաջին 5% ներքին փոխառութեան տոմսակը արժէ 192 ր., երկրորդին 185 ր. 75 կոպ., պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ռուբլ, երկրորդին 93 ր. 75 կոպ., $5^1/_2$% բէնտա արժէ 99 ռուբլ 75 կոպ., պոլուիմպերիալի գինը 7 ռուբլ և 68 կոպէկ է։ Տրամադրութիւնը թոյլ է։

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹՈՒՐՔԻԱ

—

Մի քանի թիւրքաց զրահաւոր նաւեր Դունայի վրա ռուսներից ճայթվեցան։ Վիէննայի «Presse» հաղորդում է որ Կալաֆատից Վիդդին բերդի ռմբակոծութիւնը շարունակվեց մի ժամից պակաս, յետոյ դադարեց։ Ռումինիայի իշխանը ներկայ էր գտնվում ռմբակոծութեան ժամանակ։ Բուխարէստից մինչև Տէկուչ և Բրայլով երկաթուղու երթևեկութիւնը ընդմիջված է հեղեղի պատճառով։—Վիէննայի «Tagblatt» լրագիրը հաղորդում է որ ռումինացիները վեր առան մի թիւրքաց ամրացած տեղ։ Տօպօլեցայի թիւրքաց տեղապահ զօրքը փախաւ, կորցնելով 30 մարդ։—Փարիզից, մայիսի 16-ից հեռագրում են որ Կ. Պօլսի մէջ ժողովրդի յուզմունքը շարունակվում է այն օրից սկսած, երբ սօֆթաները անկարգութիւն արին։ Վախենում են որ Կ. Պօլսում ծագի յեղափոխութիւն։—Լրագիրները հաղորդում են որ Թիւրքիայի մահմեդական հոգևորականութեան գլուխը, շէյխ-ուլ-իսլամը ներկայացրեց Սուլթանին «Յաղթարարի» տիտղոսը թիւրքաց զօրքից Սուխումի վերցնելու պատճառով։ Ասում են թէ Կ. Պօլսում մեծ և փառաւոր տօնախմբութիւններ կատարվեցան Սուխումի, Գուդաուտի, Ադլերի և այլ մի քանի կովկասեան ծովեզերեայ անպաշտպան տեղերի թիւրքաց զօրքից վերցնելու պատճառով։ Այդ բոլոր տեղերում գրեթէ զօրք չը կար և այդ տեղերը ամրացած չէին։—Թիւրքաց պաշտօնական տեղեկութիւնները աշխատում են ցոյց տալ որ ռուսները Արդահան բերդը վերցնելու ժամանակ մեծ կորուստներ են կրել։ Նրանք հաւատացնում են որ ռուսները 300 մարդից աւելի կորցրին, իսկ թիւրքաց զօրքի մէջ իբր թէ միայն 10 մարդ սպանվեցաւ։—Կ. Պօլսի թիւրքաց «Վակիտ» լրագիրը հաղորդում է որ Թիւրքիայի մայրաքաղաքը հրամայված է շրջապատել պաշտպանողական մարտկոցներով։

### ՖՐԱՆՍԻԱ

—

Ինչպէս յայտնի է արդէն մեր ընթերցողներին, Ֆրանսիայի յետադէմ՝ բօնապարտեան և կղերական կուսակցութիւնը կատարեց մի յանկարծակի յեղափոխութիւն, փոխելով հանրապետական չափաւոր մինիստրութիւնը և կազմելով նոր մինիստրութիւնը, Բրոլի և Ֆուրտու պարոնների պէս կատաղի բօնապարտեաններից։ Այժմ բօնապարտեան կուսակցութիւնը բարձրացրեց իր գլուխը։ Հանրապետութեան նախագահ մարշալ Մակմահօնը չը բաւականացաւ յետադէմ մինիստրութիւնը կազմելով, այլ խնդրեց նորա կազմվելուց յետոյ հրամայեց արձակել մի մասով Սենատը և Պատգամաւորների ժողովը։ Սենատի և Պատգամաւորների ժողովի հանրապետական ներկայացուցիչները այդ պատճառով իրանց մանիֆէստներ հրատարակեցին դիմելով դէպի ազգը, ցոյց տալով նրան Մակ-Մահօնից արած անիրաւութիւնը և հրաւիրելով ժողովուրդը իր բոլոր ջանքը գործ դնելու հանրապետութեան գոյութիւնը պաշտպանելու համար։ Ֆրանսիական նոր մինիստրութիւնը սկսել է արդէն արձակել և իրանց պաշտօններից հրաժարեցնել բոլոր պաշտօնեաներին, որոնք համակրում են հանրապետական ուղղութեանը, իսկ մինիստրները սկսեցին իրանց մօտիկ ազգականներին բաժանել զանազան նշանաւոր տեղեր և պաշտօններ։ Գերմանիայում և Իտալիայում շատ անախորժ տպաւորութիւն արեց Մակ-Մահօնի անիրաւ վարմունքը։ Հանրապետական կուսակցութեան բոլոր ծիւղերը միացած, մեծ անբաւականութիւն են յայտնում Մակ-Մահօնի դէմ։ Անգլիական ամբողջ մամուլն էլ պարսաւեց Ֆրանսիական հանրապետութեան նախագահի աններելի վարմունքը։ Միայն պահպանողական «Morning-Post» Անգլիական լրագիրը Մակ-Մահօնի կողմն է բռնում։ Իշխան Բիսմարկի ամրաւոցից Բերլին յանկարծակի վերադառնալը բացատրվում է Ֆրանսիայի այդ անապատելի յետադէմ յեղափոխութեամբ։

### ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական «National Zeitung» լրագրում գրում են՝ «Իշխան Բիսմարկի Բերլին յետ գալով, արտաքին գործերի մինիստրութեան մէջ սկսվել է նորից եռանդոտ գործունէութիւնը։ Պետական կանցլէր շատ է պարապում։ Ամեն տեղ, բոլոր աշխատանքների մէջ երևում է իշխան Բիսմարկի անձնական մասնակցութիւնը։ Անդադար հեռագրեր են փոխանակվում Բերլինի և օտար պետութիւնների գերմանական դեսպանատների մէջ։

### ՅՈՒՆԱՍՏԱՆ

—

Աթէնքից հեռագրով հաղորդում են մայիսի 15-ից որ մինչև այժմ նոր կաբինէտը կազմելու դեռ ոչ ոքին յանձնված չէ։ Ընդդիմադրութեան կանդիդատ Ավգերինոս ընտրված է պատգամաւորների ժողովի նախագահ 71 ձայնի բազմութեամբ 42-ի դէմ։ Որովհետև այժմ տէրութեան կուսակցութիւնը ազգային ժողովի մէջ կազմում է սակաւութիւնը, այդ պատճառով մինիստրները հրաժարականը տուին։ Հրաժարական տալուց առաջ մինիստրների խորհրդի նախագահ Դէլիգէորգիս յայտնել է որ աչքի առաջ ունենալով արևելքում կատարվող նշանաւոր անցքերը, անպատճառ հարկաւոր է աւելի այժմ տալ պէրութեան և զօրացնել կառավարական իշխանութիւնը։

### ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Լուրեր տարածվեցան թէ աւստրիական մինիստրութեան նախագահ կոմս Անդրաշի իր պաշտօնից հրաժարական է տալիս։ Բայց այդ լուրը ստոյգ չէ։ Նոյնպէս տարածվեցաւ մի այլ լուր, որ անհիմն յայտնվեցաւ, այն է որ իբր թէ Աւստրօ-ունգարական զօրքի գլխաւոր տեսուչ, էրցհերցոգ Ալբրէխտ իր պաշտօնից հրաժարեցրած է։ Այդ երկու անձնաւորութիւնները միմեանց մեծ թշնամիներ են և հաւանական է որ նրանց կուսակցութիւնները են յայտնում փոխադարձապէս նրանց մասին այդ սուտ լուրերը։—Ոչ մի ժամանակ գուցէ այդքան պարզ չէր երևում Աւստրօ-Ունգարիայում պետութիւն կազմող երկու տարրերի միմեանց դէմ թշնամութիւնը որքան այս րօպէիս։ Այդ երկու թշնամական տարրերը՝ ունգարացիները և սլավեանները են։ Ունգարական պատգամաւորների ժողովում, պատգամաւորներից մինը պարզ ասել է հետևեալ խօսքերը՝ «Հասարակական կարծիքը հայրենիքի դաւաճան կը համարէ աւստրիական ամեն մի սօլդատին, որ կը համարձակվէ զէնք վերցնել Ռուսաստանը պաշտպանելու համար։» Ունգարացիների պէս Ռուսաստանին աւելի թշնամական տարր ամբողջ Եւրօպայում չը կայ։ Սլավեանները համակրում են ի հարկէ Ռուսաստանին, բայց այնքան ոյժ և նշանակութիւն չունեն։ Տիրապետող տարրը Աւստրիայում ունգարացիներն են կազմում։

---

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Новое Время» լրագրին հեռագրում են Վիէննայից մայիսի 10-ից, որ Զէրնօգօրիայի իշխան Նիկօղայոս 8 բատալիօններով հասաւ Լուկօվօ և պատրաստվում է ռմբակոծել Նիկշիչ բերդը։

—Եգիպտոսում Անգլիայի ագենտները առնում են ուսելիքների պաշար 80 հազար զօրքի համար։

—Աթէնքից հեռագրում են, որ Յունաստանի մայրաքաղաքի լրագիրները յորդորում են բանկիրներին և առևտրական մարդիկներին նիւթական զոհաբերութիւններ անել հայրենիքի համար։ Շատերը խոստանում են նուիրատուութիւններ անել յունական այն նահանգները ազատելու համար, որոնք գտնվում են Թիւրքաց տիրապետութեան ճնշման տակ։

—«Нашъ Вѣкъ» լրագրին տեղեկացնում են Վիէննայից իբր թէ աւստրօ-ունգարական տէրութիւնը պէտք է բողոքէ Ռումինիայի անկախութեան յայտնելու դէմ։

—Նոյն լրագրին գրում են որ իբր թէ Աւստրիան իր զօրքերով Բէլգրադ կը պաշարէ եթէ Սերբիան պատերազմ յայտնեց Թիւրքիայի դէմ։

—Կ. Պօլսից հեռագրում են որ Արդահան բերդի կոմենդանտը զինուորական դատաստանին ենթարկված կը լինի։

—Ֆրանսիայում յետադէմ յեղափոխութիւնը որ կատարվեցաւ Մակ-Մահօնի ձեռքով մինչև այն աստիճան է հասել որ ֆրանսիական քաղաքներից շատերի քաղաքային վարչութիւնները լուծվում են։ Մարսէյլի քաղաքային խորհուրդը, որի անդամները մեծ մասամբ արմատական հանրապետականներ են, լուծվեցաւ և նորա տեղը կազմված է տէրութեան պաշտօնական մասնաժողով։

—Վիէննայի «Tagblatt» լրագիրը կարծում է որ Սերբիայից, Բօսնիայից և Հերցեգովինայից կը կազմվի մի դաշնագրական պետութիւն, Հաբսբուրգեան տան մի իշխանի կառավարութեամբ։

—Փարիզից լուրեր են գալիս որ տէրութիւնը վճռեց յետ ձգել համաշխարհային հանդէսը։ Միւս կողմից այդ լուրերը հերքվում են պաշտօնապէս։

—Սերբիայում սատիկ յուզմունք կայ, ազգը պատերազմ է պահանջում։ Ամբողջ երկրում պատերազմի պատրաստութիւններ են անում։

—«Kölnische Zeitung» լրագիրը հաղորդում է որ Թիւրքիայի շէյխ-ուլ-իսլամը, մահմեդական հոգևոր իշխանութեան գլխաւորը, յայտնել է սրբազան պատերազմ Ռուսաստանի դէմ։

—«Нашъ Вѣкъ» լրագիրը ասում է որ Աւստրիայի ընդդիմադրութեան լուրը Ռումինիայի անկախութեան յայտնելու դէմ, ստոյգ չէ։ Կարծում են որ Սերբիան նորից միանալով Զէրնօգօրիայի հետ, պատերազմ կը յայտնէ Թիւրքիային։

—«Daily Telegraph» անգլիական լրագրին հաղորդում են որ ռուսաց զօրքը սկսեց արդէն ռմբակոծել Ղարսի բերդը։

—Հեռագիրը հաղորդում է որ Յունաստանի Գէորգ թագաւորը յանձնել է նոր մինիստրութեան կազմելը Կոմանդուրոսին։

—Վերջին հեռագիրը հաղորդում է որ Թիւրքիայի մայրաքաղաքում յուզմունքները շարունակվում են։ Ազգային ժողովը շարունակ նստեր ունի։ Ընդդիմադրական կուսակցութիւնը դիտաւորութիւն ունի յետ կանչել տալ Միդհատ-փաշային և նրան ընտրել պետութեան լիազօր կառավարիչ (դիկտատոր)։ Սուլթան Աբդուլ-Համիդը, ասում են, պէտք է հեռանայ Անդրիանոպոլ քաղաքը։

---

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց «Православное Обозрѣніе» ամսագրի մարտ ամսի տետրակի (№ 3) մէջ, ներկայ 1877 թվի, տպվեցան շատ հետաքրքիր նամակներ սրբազան Ֆէօֆան ռուս եպիսկոպոսի, «Արևելեան խնդրի» վերաբերութեամբ, որոնց մէջ նա խօսում է և հայերի վրա։ Միւս համարում կը խօսենք այդ հետաքրքիր նամակների մասին։

* * *

«Кавказъ» լրագիրը շատ խելօք կերպով է պատասխանել պ. Ժէլիխովսկուն։ Նա ասում է մօտաւորապէս այսպէս՝ «Մենք տպեցինք այս յօդուածը, բայց եթէ նոյն կամ սորան նման յօդուածը գրած լինէր պ. Ժէլիխովսկին, մենք երբեք չէինք տպի...» Ինչ խելօք պատասխան է... Եթէ դուք ձեր յօդուածը խելացի և արդար էք համարում, ձեզ ինչ ով կը լինի նրա հեղինակը։ Բայց ասելով թէ չէիք տպի այդ տեսակ յօդուած, եթէ ուրիշը գրէր,—նշանակում է թէ ինքներդ խոստովանում էք ձեր յօդուածի թերութիւնը, կամ գոնէ անյարմարութիւնը։ Դիտէք դա ինչ է նշանակում՝ «Ես խոստովանվում եմ թէ յիմարութիւն եմ գրել, բայց ես այնու ամենայնիւ ինձ իրաւունք եմ պահում միայն իմ սեփական պատրաստութեան յիմարութիւններ տպել, և ոչ թէ ուրիշի գրչից դուրս եկածները...»

* * *

Ֆրանսիական «Temps» լրագիրը ասում է հետեւեալը Թիւրքիայի հայերի մասին։ «Թիւրքիայի հայերին կարելի է երկու որոշ մասերի վրա բաժանել։ Նոքա, որոնք որ և է պետական պաշտօն են վարում, ցոյց են տալիս ճշմարիտ համակրութիւն դէպի Թիւրքերը, կապված լինելով իրանց շահերի հետ։ Բայց նոքա չեն կարող անկեղծ կերպով սիրել Թիւրքերին, որոնք թէև տալիս են նրանց տեղեր և պաշտօններ, բայց շատ անշնորհ կերպով։ ցոյց են տալիս նրանց թէ իրանց յարաբերութիւնների թէ խօսակցութիւնների մէջ խոր և ոչինչ բանի վրա չը հիմնված արհամարհանք։ Բայց տեղերը լաւ են, և մեր հայերը պինդ բռնում են այդ տեղերից, ցոյց տալով անասելի քնքոյշ զգացմունքներ դէպի իրանց իշխողները։ Այդ սէրը ծիծաղելի է երևում նոցա, որոնք լաւ ծանօթ են հայերի գաղտնի զգացմունքների հետ։ Բայց ամբոխը, հայոց ազգը, թէև առհասարակ թշնամական կերպով չէ վերաբերվում դէպի Թիւրքերը, բայց մի և նոյն ժամանակ առանձին սէր և համակրութիւն էլ չունի դէպի իր իշխողները։ Հայերը ամենից առաջ ցանկանում են որ պատերազմը շուտով վերջանայ, որովհետև նա արդէնք է լինում նրանց առևտրական գործերին, վնասում է այդ քաղաքակրթած և աշխատասէր ազգի շահերին։»

* * *

Պ. Գրիգոր Պապեան, որի «Աղի-Բաղարջ» վէպի տպագրութիւնը «Մշակի» անցեալ համարում վերջացրինք, ունի դարձեալ հետեւեալ գեռ չը տպագրված թէ ինքնուրոյն, և թէ թարգմանական վէպեր, որոնց բովանդակութիւնը մեզ յայտնի չէ։ «Բախտախնդիր Եղբայրներ», «Օձի հուլ» կամ «Բերեց Ամին — տարաւ քամին», «Խաչակիրներ» (Մուշի գաղթականների կեանքից), «Թշնամի գաղանիք», «Որբեր», «Որդեսպան», «Թափառական հայրենասէրք», «Մանուկ Մշեցի», «Տէր Զի—Կէն», «Կեանքի Անիւը» (թարգմանութիւն) «Գիժ Տիրացուն» (կենսագրութիւն), «Մարդակերների կղզին» և վերջապէս «Անհաշտ Բաղ» (կենսագրութիւն)։ Բացի սրանից մեր տաղանդաւոր երիտասարդ գրողը ունի պատրաստ և հետեւեալ աշխատութիւններ՝ «Աւ քեզ տարաքոց» (վէպ), «Եղծած պատան» (ողբերգութիւն), «Ո՛նց է, ինչ» (վէպ), «Ցուփ» (բանաստեղծութիւններ), «Մանկական քնար» (ժողովածու մանկական երգերի), «Բոյսը և նորա թագաւորութիւնը» (աշխատասիրութիւն)։—Անհերքելի է, կրկնում ենք, որ երիտասարդը ունի տաղանդ, բայց դեռ պէտք է շատ սովորէ, շատ պարապէ, կեանքի մէջ ապրէ, կարդայ, որ

մշակէ իր տաղանդը։ Մենք այսպէս խիստ չէինք դատի պ. Պապեանի վրա, եթէ նա չատերի պէս հասարակ թուղթ մրոտողներից լինէր։ Բայց նա եթէ ճշմարիտ աշխատէ, պահելով իր այժմեան համեստութիւնը, նա մեր նոր գրականութեան մէջ կարգից դուրս գրողներից կը լինի։ Մենք երբէք չենք սխալվում մարդկերանց ճանաչելու մէջ.... Կարող է մարդը չարդարացնել մեր յոյսերը, ծոյլ լինել, կամ հիւանդութեան պատճառով չաշխատել, կամ չքաւորութեան պատճառով միջոց չունենալ առաջ գնալ, զարգանալ, կամ անպիտան, մտաւորապէս խեղդող շրջան ընկնել, — բայց ընդունակութիւն, տաղանդ ճանաչելում՝ մենք չենք սխալվի։


Մի Ֆրանսիուհի ՏԻԿԻՆ կամենում մասնաւոր տներում ՖՐԱՆՍԻԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ լեզուի դասեր տալ։ Հասցէի մասին կարելի է տեղեկանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատան մէջ։

ДАМА французжанка желаетъ имѣть въ частныхъ домахъ уроки *французскаго и англійскаго* языковъ. Спроситъ объ адресѣ въ редакціи газеты «*Мшакъ*.»

4—10


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


ՂԱՐԱԲԱՂԻ Ազգային Հոգևոր Դպրոցի համար հարկաւոր են երկու ուսուցիչք. մէկը՝ ռուսաց լեզուի, ռուսաց աշխարհագրութեան և ռուսաց պատմութեան. միւսը՝ ընդհանուր պատմութեան և ընդհանուր աշխարհագրութեան համար. ցանկացողներից խնդրվում է յայտնել շատ շուտով իւրեանց պայմանները և նոյնպէս թէ համալսարանում կամ մի որ և իցէ բարձր դպրոցներում ուսել կամ աւարտել և ծառայել են թէ ոչ ուսուցչական ասպարիզում։ Նամակների հասցէն ուղղելու է Հոգևոր Դպրոցի տեսչի անունով և այսպէս։ ՇՈՒՇԻ Վասակ Պապաջանեան։

5—5

ԾԱԽՎՈՒՄ Է

ԿԻՐ հանդցրած և չը հանդցրած, եաշչիկներով և սաժէնով։ Պայմանների մասին դիմել Վ. Լ. ՊԱՏԿՕՎԻ և ընկ. սպիրտի պահեստը, որը գտնվում է Կուկիայում, Նիկոլաէվսկի փողոցում № 44.

6 (8)


Տփխիսու Հայոց Ծխական ուսումնարաններում հարցաքննութիւնները սկսվելու են մայիսի 23-ին և աւարտվելու են յունիսի 6-ին, հետեւեալ կարգով։

| | | |
|---|---|---|
| **Մայիսի** | | |
| 23 | Ջիգրաշէնու Աւետեաց եկեղեցւոյ տղայոց և օրիորդաց ուսումնարաններում . . . . . | Կրօն, Հայոց լեզու և Եկեղեցական երգեցողութիւն։ |
| 24 | Կաթուղիկէ սուրբ Գէորգայ եկեղեցւոյ տղայոց և օրիորդաց ուսումնարաններում . . . . . | |
| 25 | Կուկիոյ Սուրբ Աստուածածնայ «Թանդոյեանի» տղայոց և օրիորդաց ուսումնարաններում. . . . . | |
| 26 | Հալաբարու Մարիամեան և Սուրբ Կարապետի ուսումնարաններում . . . . . | |
| 27 | Զորաբաչու և Շամքոռեցւոց եկեղեցիների ուսումնարաններում | |
| 30 | Ջիգրաշէնու Աւետեաց եկեղեցւոյ ուսումնարաններում . . . | Ռուսաց լեզու, Թուաբանութիւն Նկատողական ուսումն |
| 31 | Կաթողիկէ եկեղեցւոյ ուսումնարաններում . . . . . | |
| **Յունիսի** | | |
| 1 | Կուկիոյ «Թադոյեանի» ուսումնարաններում. . . . . | |
| 2 | Հալաբարու Մարիամեան և Սուրբ Կարապետի ուսումնարաններում . . . . . | |
| 3 | Զորաբաչու և Շամքոռեցւոց եկեղեցիների ուսումնարաններում | |
| 4 | Վանքի Մայր եկեղեցւոյ «Մարկոսեանի» օրիորդաց ուսումնարաններում . . . . . | Բոլոր առարկաներից |
| 6 | Սուրբ Մինաս եկեղեցւոյ «Դանիէլ Իզմիրեանի» ուսումնարաններում . . . . . | Բոլոր առարկաներից |

Ծանութիւն։ Հարցաքննութիւնները սկսվելու են առաւօտեան ժամի 8-ից։




Ամենահիմն ԼԱՄՊԱՆԵՐ, ամենանոր սիստեմայով թէ նաւթի թէ ձէթի համար, յայտնի եւրոպական գործարաններից ծախվում են իմ դէպոի մէջ, որ գտնվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Պալատի և Մուզէումի հանդէպ, Ս. Շաբուրովի տանը։

Բացի սորանից իմ դէպոյի մէջ ծախվում են լամպաների ամեն տեսակ պատկանելիք՝ ինչպէս ապակիներ, աբաժուրներ, գունտեր և այլն։

Ստացվեցան մեծ քանակութեամբ այգու շամադաններ, լապտերներ և այլն։

Օտարաքաղաքացիների պահանջները կը կատարվեն շուտ և ճիշդ կերպով։

8—10 Ե. ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

ЯПОНСКАЯ КРАСКА ДЛЯ ВОЛОСЪ

Совершеннѣйшее окрашиваніе волосъ головы и бороды, безъ малѣйшихъ оттѣнковъ.

RIGAUD & C°, 8, Rue Vivienne, PARIS

Большая медаль за заслуги

На всемірной выставкѣ въ Вѣнѣ.

Фабричная марка.

Это приготовленіе есть наискорѣйшее и наисовершеннѣйшее между всѣми для окраски волосъ средствами, извѣстными досель. Оно окрашиваетъ мгновенно волосы головы и бороды, причемъ сохраняются блескъ и природная гибкость волосъ. Средство это безвредно и употребленіе онаго весьма легко. Описаніе, прилагаемое при каждомъ флаконѣ, научаетъ какъ красить себѣ волосы безъ помощи куафера.

ВЪ ТИФЛИСѢ У ЦУРИНОВА

ВПРЫСКИВАНІЕ ИЗЪ МАТИКО

АПТЕКАРЯ ГРИМО и К°. ВЪ НАРИЖѢ

Впрыскиваніе это, приготовленное посредствомъ перегонки листьевъ перуанскаго дерева МАТИКО, употребляется по предписанію врачей противъ гонореи. Депо во всѣхъ главныхъ аптекахъ Россіи. — Избѣгать подлѣлокъ.


ՄԱՅԻՍԻ 23. ՏԵՂԵԿԱՅՈՑ ԹԻՖԼԻՍ. 1877.

### ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մայիսի 23-ին)

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Ոսկին (պոլումպերիալը) | 7 | 65 |
| Հին 82 պր. մ. արծ. 1000 մ. | 1250 | — |
| Հին 20 կ. 72 պր. 1000 » | 1090 | — |
| Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 » | 189 | — |
| Երկրորդ 5% վիգրիչնի » | 184 | — |
| Մարսելի կուրսը 267 ֆր. | 100 | — |
| Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա. . . . . | 9 | 42 |
| Վենայի կուրսը ածէ 142 գլ. | 100 | — |
| Դաւրեժի բարաթը. . . | 4 | 90 |
| Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . . | 280 | — |
| Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ. | 125 | — |
| Շաքարը բրօցկու . . | 8 | — |
| » միւս տեսակը. | 7 | 80 |
| » շաքարաւազը . | 7 | — |
| » տրանզիտը. . | 8 | — |
| » մաքսը վճարած | 11 | 30 |
| Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . . | 6 | 60 |
| Միւս տեսակը հին սերմից. | 5 | 70 |
| Բուրդը թուչի . . . | — | — |
| » թարաքամի . | 3 | — |
| Աւլիւր Շորագալու . . | 1 | 40 |
| » Երևանի. . . . | 1 | 10 |
| Գարին. . . . . | — | 60 |
| Մոմը բնաճարպի (стеар.) | 14 | — |
| Մետաքս Նուխվայ . . | — | — |
| Կախեթունը. . . . | 50 | — |
| Կոկոնը Նուխվայ (բոժ.) | 25 | — |
| Ֆրիզոնը (լասը) Ադուլեաց . . . . . | — | — |
| Կոֆէն մօկօի. . . . | 25 | — |
| » լիվանի . . . | 21 | — |
| » մարտինկոյինը . | 17 | — |

### ՀԵՌԱԳԻՐ

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . . | 1 | |
| Նոր-Նախիչևան, Աստրախան, Ղըրիմ, Մայրաքաղաքներ և Եւրոպական Ռուսաստան . . . . | 2 | |
| Աւստրիա . . . | 3 | |
| Անգլիա. . . . | 4 | |
| Գերմանիա. . . | 2 | 88 |
| Թուրքիա . . . | 3 | 25 |
| Ֆրանսիա . . . | 3 | 75 |

### ՆԱՒԵՐ (Շրջական գիծ)

Օդեսայից Փոթի (ամառը) հինգշաբթի ժամը 3-ին կէս օրից յետոյ։

Փոթիից Օդեսա երկուշաբթի 8 ժամին առաւօտեան։

Օդեսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի 3 ժամին։

Փոթիից Օդեսա հինգշաբթի առաւօտեան։

Փոթիից Կ. Պոլիս կիրակի առաւօտները։

Կ. Պոլսից Փոթի կիրակի առաւօտները։

### (Ուղղակի գիծ)

Օդեսայից Փոթի երկուշաբթի 3 ժամ. կէսօրին։

Փոթիից Օդեսա շաբաթ 8 ժամ. առաւօտ։

### ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 36 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 4 ժամ. 54 րոպէ։

| | առաւօտ. | երեկոյեան |
|---|---|---|
| Թիֆլիսից | 9. 36 | 4. 54 |
| Գորի. | 12. 32 | 9. 11 |
| Միխայլովո | 2. 15 | 11. 25 |
| Բութայիս | 8. 33 | |
| Փոթի. | 11. 46 | |

| | առաւօտ. | |
|---|---|---|
| Փոթիից | 8. 38 | |
| Բութայիս . | 11. 59 | |
| Միխայլովո. . | 5. 56 | 1. 06 |
| Գորի. . | 7. 33 | 3. 36 |
| Թիֆլիս. | 10. 16 | 7. 24 |

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 10 ժ. 16 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 24 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

| | I կլաս. | II կլ. | III կլ. |
|---|---|---|---|
| Մցխէթ . | 90 | 68 | 38 |
| Գորի. . . | 3. 20 | 2. 40 | 1. 33 |
| Սուրամ . | 5. 22 | 3. 92 | 2, 18 |
| Բութայիս | 9. | 6. 75 | 3. 75 |
| Փոթի . . | 13. 1 | 9. 75 | 5. 42 |

### ՓՕՍՏ

1) Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ՝ Ռուսաստան և արտասահման ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 12 (բացի կիրակի օրերից)

2) Բագուի ճանապարհը՝ թեթև փոստը ընդունվում է երեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ծանր փոստը երկուշաբթի։

3) Երևանի տրակտը՝ ամեն օր։

4) Փոթի-Թիֆլիսեան երկաթուղու գիծը՝ ամեն օր, բացի կիրակի օրերից։

5) Նուխու տրակտը՝ թեթև փոստը ընդունվում է չորեքշաբթի, իսկ ծանր փոստը շաբաթ օրերը։

6) Բէլիկլիչի ճանապարհը՝ ամեն տեսակ փոստ ընդունվում է երկուշաբթի և ուրբաթ օրերը։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացի գուշի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բէլիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

### ՆԱՄԱԿՆԵՐ

| | Կոպ. |
|---|---|
| Բաց նամակը ածէ. . | 4 |
| Ռուսաստան նամակը | 8 |
| Գերմանիա, Աւստրիա | 8 |
| Ֆրանսիա. . . . . | 8 |
| Անգլիա . . . . . | 8 |
| Շվեյցարիա. . . . | 8 |
| Թուրքիա (կ. Պոլիս . | 8 |
| Թուրքիա (ցամաք) . . | 8 |
| Իտալիա . . . . | 8 |
| Ամերիկա . . . . . | 28 |
| Պարսկաստան . . . | 10 |
| Հնդկաստան . . | 70 |
| Եգիպտոս . . | 27 |

### ՓՕՍՏԻ ԿԱՌՈՒՑՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս փոստի կարգերը գընում են ամեն օր, երկու անգամ օրը։

### «ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՄՕԶԴՕԿ։ Ն. Տ. Ղ. Ստացանք մի բաժանորդի վճարը։

—ՔՈՒԹԱՅԻՍ Տ. Ս. Ստացանք ձեր յօդուածը։

—ԱԽԱԼՔԱԼԱՔ։ Բ. Պ. Ձեր հաղորդած լուրերից ոմանք կարելի է տպել, ոմանք ոչ։

—ԴԷՐԲԷՆԴ։ Անյայտ գրողին։ Դարձեալ քահանաների վրա... Ցէր Աստուած, Երբ կը վերջանան դրանց վրա գանգատները...

—ՂՈՒԲԱ։ Ակնատես։ Ցաւում ենք որ ձեր յօդուածը տպել չենք կարող։ Արդէն չատ անգամ կրկնեցինք որ այն լրագրի դէմ պոլէմիկ անելը ցանկութիւն չունենք։ Մեր պատասխանը, մեր պոլէմիկը, մեր բանակռուութիւնը, — խորին զզվանքը և արհամարհանքն է։ Բայց գուցէ քաղուածք անել կարելի է ձեր գրուածքից, ինչ որ փաստերին է վերաբերում։ Կը տեսնենք։

Дозволено цензурою 21 Мая 1877 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ